

գրքի վերջնից գլուխը համեմատաբար նորամուտ մասեր են: Չենք ուզում ասել, որ դրանք անհարազատ միջանկներ են (interpolation): Մենք պաշտպանում ենք այն միտքը, որ դրանք այլ աղբիւր, այլ ծագում ունին երկի ճարտարապետութեան, կառուցումի տեսակէտից: Անցնենք դրանց ճննութեան:

(Շարքարքիւի)

ՊՐՈՖ. Ն. ԱՅՈՆՑ

ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ

ՀԱՅԵՐԷՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

ԳԻՐԳ ԹՂԹՈՑԻ ՄԵՋ

(աղ. ԹԻՖԼԻՍ 1901)

(Շար. տես Բազմալէզ, 1925 էջ 261)

15. Խաչարգաբար

Եւ զի Աստուծոյ սեղան իւրաքաբար օրհնութեամբ յուղղոցն և ի կատարելոցն զխաւորացն եղանի, ամենեցուն յայտ է (էջ 153):

Խաչի յարգանքով կամ պաշտամունքով եղած:

16. Խոնսուկը

Թեպէտ և ծառայք արքայից արքայի եմք, զհաւատ զԵրուսաղէմի ունիմք և կալցուք: Չի թէ ցայժմ խոնսուկը էին Տեաքը, այժմ որչափ եւս առաւել երանելի եմք, որք յարքայից արքայի ծառայուլ թեան հասեալ եմք (էջ 167): Պահլաւերէն բառ մ'է, իմաստը անյայտ. հմտ. Ուխտանէս, հտ. Բ. գլուխ Խէ, էջ 76-77:

17. Կաղուկ

Եւ նա զօրէն օծի ունի, որ մինչեւ ի ջերմանալ աւուրն յար ի գազանութիւնն, և ի ցրտին աւուրն կաղուկալ իրրե կմեռեալ լինի (էջ 330):

Այս վկայութիւնը ունի նաեւ ՆՀԲ Կղարի ձևով, զոր կը մեկնէ «Իրը կուղ լինել, կծկիլ»: Այսպէս ունին նաեւ Զախւ ջախեան և Առձեռն:

Ըստ իս այս բացատրութիւնը ուղիղ չէ. բառը պէտք է կցել կաղանջ բային, որուն նշանակութիւնն է «ձմեռը օծին պաղիլ՝ թմրիլ»։ հմտ. Անյ. հց. իմ. «Կամ նոյն իսկ օծից ազգ, որ ի ջերին աւուրան յար ի գազանութիւն յանդգնի և արեգաւ կան ի հարաւ խոնարհեցելոյ՝ կաղաւէ»։

Այս մեկնութիւնը գեղեցիկ կերպով կը հաստատէ գու. Կաղարի (Ակն, Չեկիլէր) «ցուրտէն սառիլ, ընդարմանալ»։ Ինչ. Չեռքերը ցրտէն կաղուր է:

18. Կարմիր

Առաջ հինգ հարիւր կարմիր... և ելից առաջի իմ զոսկին (էջ 527)... և ետու նմա երկու կարմիր և մտեալ ի գեղեզմանն զրի երիս կանթեղս (էջ 528):

Կը նշանակէ «ոսկի, ոսկեղբաւ» և է իրը թրգմ. Թրք. qəzəl բառին. նոյն զոր. ծածկութիւնը ունի նաեւ Վրդ. Պոմ. էջ 162:

19. Կերեւուրաց

Վասն Հեքրայեցւոցն ասաց զկերեւուրաց և զաստուածամարտաց ազգն զորս յարգէրն վասն արմատոյն (էջ 6):

Ոսկեղբաւեան գեղեցիկ բառ մ'է. կը նշաւ նէ «կերածը ուրացող, անաղուհաց, աւ պերսխտ»։

20. Կթոց

Ըստ Հռովմայեցւոց յԱ ամսոյն յերեքն որ կոչի Սեպտեմբեր, և ասորերէն իլուլ և Հայերէն Կթոց (էջ 273):

Կրոց «Սեպտեմբեր» կազմուած Կրեյ «այգեկութ ընել» բայէն, ճիշտ ինչպէս ունինք գու. քաղոց «յունիս» ամսանունը՝ քաղիլ բայէն:

21. Կեր

Պանգի և զարբանեկէն ձերոյ ասաց. ի կեր ուղույ հրաժարի, բայց մեզ բարեւ պաշտութիւն խնդրել զուշակեցաւ (էջ 196):

իմաստը կը պահանջէ « ուղիղ, ճշմարիտ » նշանակութիւնը, եթէ միայն կերպիւ զըշուծիւն մը չէ, փխ. ներս:

22. Հալանել

Ձի հողոյն ասէ կառուցեալ մարմին և փշել շունչ և հոգի. և գոհաւն և զինչ ոչ հալանէ. զի փոքրն, անճառութեամբ ուսուցանելով պատմել, կարճեցէ ի վեհագոյն պատճառէն (էջ 22):

Հրատարակիչը կ'ուզէ ուղղել հոյանել, որ կը նշանակէ « մերկանալ »: Եւս եւս այսպէս կը կարծեմ, իայց հոյանել հոս գործածուած է երկրորդ փոխաբերական իմաստով մը, այն է « մեկնել, բացատրել, յայտնել », որ իսկապէս զաղափարին մերկացումն է: Գրեթէ նոյնպիսի առումներ կը ցուցնեն՝ Զկռապաշտիցն հոլանեցաք զյիմարութիւն. ՅՏ. իմ. պաւլ. Ստութեան նորա հոլանիւր կեղծիք. Որ յայտնապէս աստուտութեամբ բացափայտեալ բանիս հոլանիցին միտք. Խոսքովիկ:

23. Հաւնումն

Բայց թէ վասն քահանային մերձեցման զվատթարագոյն արբեալ համարիք, մի՛ գուցէ և նա վարակիցի. քահագի վատթարի և առաքինւոյ առ միմեանս յարմար հարկ է և զհառնումն առնուլ, որ լինի ո՛չ առաքինի և ո՛չ վատթար. և այս ի բազումս (էջ 155): — Ուղղելի խառնումն:

24. Հողիողումն

Ո՛վ հովիւք, որ կորուսէք և ցրեցէք զոչխարս արօտի իմոյ, արդ ահաւասիկ ես վրէժ առից ի ձեռն, զի լցան աւուրք ձեր ի հողհողումն (էջ 115):

Կ'ակնարկէ Երեմ. իգ. 1. Ո՛ հովիւք ևն հաւուսածք. բայց հողհողումն բառին իմաստը պարզաբանող բան մը չեմ կրնար գտնել:

25. Ճուղաւան

Չայս վեց եպիսկոպոսքս փախուցիք և սպանիք, ճաղաւանք, մուլար և խոտոր,

ստափառ, զայլախումբ, զառնակոտոր, դիւածամբ, արինաթաթախք, պղծաժողովք ... (էջ 491):

Այս զանազան նոր բառերուն մէջ՝ ուրոնք հասարակ բարդութիւններ են՝ նրկատելի է ձառքառան, որ թերեւս պէտք է ուղղել ժաղդառան « ծուռ հաւատքի հետեւող »: Սակայն հմտ. Ղարաբաղի բարբառով չեմ մեկիք, չեմ կարողիկոս, այն է « սուտ մեկիք, սուտ կաթուղիկոս »:

26. Շմկիլ

Մարդու արժանի են բանքն. զպատուաւ կանն, ոչ զանգիտես, ըստ նոցա շմկեալ և խառնափնդորեալ վարկի՝ յանձն առնուլ (էջ 24):

Շմկեալ և խառնափնդորեալ գրեթէ հոմանիշ բառեր են: Նորայր, Բառ. Փրանս. 1244 Բ ունի շմկիլ « գործել ինչ խառնաման կամ աղտեղի օրինակաւ, շաղախել, tripoter »: Ո՛րն է ուղիղ ձևը:

27. Ունարան

Տէրն մեր և Աստուած ի ձեռն սեղանոյն ճշմարտագործէ, որպէս պատմէ աւետարանագիրն և զինքն իսկ առնէ յուտել կերօղացն. ապա հակառակ ունարան ի լուծումն փոխէ գէութիւն զտենչալ ի հրոյն կայծակն (էջ 154):

Իմաստը անայտ է. թերեւս աղճատ զըշուծիւն:

28. Զարցել

Պատուական գտելոցդ և վեհ ժողովելոցդ, որք զկարութիւն բերել յօժարութեամբ յառարկութիւն և զանտեղիս բացասողը, նաեւ ոմանք թուեցեալ ի դէպ է ինձ իմանալ կամօք հաւասար հարց ջանի աթենականիցն նորագունից լսօղս և պատմիչս յարդեան ժամանակին ի մէջ հիւսիսոյ կողմանդ տաղաւարողը զըղորդ լսօղս տարաբերմամբ, մանաւանդ սոսկս ջարցեալ. զ'ի խորհրդոյդ սեհոումն (էջ 196):

Շատ մութ է գրուած. կէտադրութիւնը շատ գէշ: չարքոցի թերեւս նշանակէ « մեկ-նել, ըմբռնել, պարզաբանել »:

29. Զաշանք

Անշուշտ ստուերաւ պարփակեալ նստէաց ի խաւարի դիցազանցն տօնից և Զաշանցն հեթանոսականաց (էջ 374):

Այս վկայութիւնը գիտէ նաեւ ՆՃԲ՝ սխալ ընթերցուածով. նստէաց ի խաւարի դիցատօնակ և Զաշանց հեթանոսականաց: Բայց ՆՃԲ իմաստուն գտնուած է հաւատ չընծայելու դիցատօնակ բառին՝ զոր չի յիշեր (գիտէ միայն Առձեռնը), և միւս կողմէ յաղոյ կերպով Զաշանց կցած է չարանք բառին. « Զալհանց տօնից տաւրեկանաց հեթանոսաց չհաւատարել »: Եւազբ. ԺԻ: Նոր վկայութիւնը տօնից բառին յաւելուածով՝ կը հաստատէ ՆՃԲ-ի ենթադրութիւնը:

30. Վասպուրականագոյն

Աստուած զարջայից արքայ անմահ բարասէ, և զքեզ, Տէր, աւելի տերանց վասպուրականագոյն արասցէ զաւակաւդ հանդերձ (էջ 170):

Կը նշանակէ « ազնուականագոյն, առաւել ազնուական »: Կու գայ վասպորաւ, կոն « ազնուական » հազուադիտ բառէն, որ է պհլ. vāspuhrakān « Սասանեան պետութեան ազնուականներու բարձրագոյն զատակարար կամ ամենէն ազնուական եօթը բնաւանդներու անդամները » (տես Հիւպէ. Altarm. Ortsnamen, 262, 470):

31. Տապաստել

Ամենակալն բարբառելով՝ զբազմաստուածութիւնն և որը յուով զյաւիտեանն առասպելաբանելով տողեն, առ հասարակ տապալեալ կործանեսցին և մի Տէր զՅիսուս Քրիստոս վարդապետելով՝ վիրաւորեսցին անբժշկելի վիրօք, որ զանբժշկելին

մոկեցնեալ բաժանեն... զոր իսկապէս տապաստելով, նշան կանգնեալ յաղթութեան (էջ 30):

Կը նշանակէ « գետին փռել, կործանել »: Կը վերաբերի հակառակ կողմի մարդոց:

32. Տրեկան

Ըստ Հոռովմայեցոցն ի տասն հոկտեմբեր, և ասորերէն թշրին կտիմ, և ըստ հայոց արեկանի (էջ 273):

Նոյն էջ՝ քիչ մը վերը ըսուած էր թէ « ըստ Հոռովմայեցոց ի 14 ամսոյն որ կոչի միայնի և յասորերէն իյար և ըստ հայոց մարգաց »: Հոկտեմբերը մայիսէն հինգ ամիս յետոյ է և որովհետեւ մարգացէն հինգ ամիս յետոյ կու գայ Հայոց տրէ, ուստի պարզ է որ տրեկան ըսելով պէտք է հասկնալ տրէ: Յայտնի չէ միայն թէ տրեկանը գրչագրական սխալ մ'է, թէ անհկան և մեհնկան՝ ձեռքէն ազդուած և իրօք գոյութիւն ունեցող ժողովրդական ձեւ մը, որ գրուածքին հեղինակը կամ գրիչը գործածեր է, ինչպէս որ քիչ մը վարն ալ գործածեր է ժողովրդական կրօք ամասնունը՝ փոխանակ սահմիի (տես Թ. 20):

33. Փացախոց

Ես եմ հացն իջեալ յերկնից. — մի՞ թէ խմոր էր. ապա ի վեր խմորահարք կան և քացախ(սխ)ոցք (էջ 495):

Երկուքն ալ նոր բառեր են. առաջինը կը նշանակէ « խմոր հարող, հաց շաղուող », երկրորդը « խաշ, հացը խմորելու մայա »:

34. Քրթփչոր

Որոց զուխ և արմատ դառնութեան Սիմոն ճանաչիւր կախարդ... Արդ որ նորանշան հարուածովքն անկեալ հերձաւ վայրապարին ճապաղեալ քրթփչորն՝ ճաւաղ լինելով յաւիտեանական հրոյն, մեծաւ ընտելութեամբ ի կիր համառօտէր (էջ 97):

Նախատական բառ մ'է « չնչին, ոչինչ բան » նշանակութեամբ:

Հ. ԱՅՈՒՆՆԱ